

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուլգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гоар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՅԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՒՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лиза Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS) 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY) 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱԳՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyanyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՊԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

Արտակ խաչատրյան

ԲՈՆՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հիմնաբառեր. Ազգային քաղաքականություն, Ռուսական կայսրություն, ազգերի ինքնորոշման իրավունք, Վ. Լենին, բոլշևիկներ, ՌՍԴԲԿ, Ի. Ստալին:

Խորհրդային ժամանակաշրջանի ուսումնասիրությունը տարբեր գիտակարգերի դիտանկյունից արդիական է նաև այսօր: Սակայն, չնայած այդ ուղղությամբ բավական պատկառելի գրականությանը, այն կարոտ է հետազոտության՝ նոր մոտեցումների և հարցադրումների կիրարկմամբ: Խնդիրն այն է, որ խորհրդային շրջանի ուսումնասիրությունը թե՛ անկախ Հայաստանում, թե՛ հետխորհրդային տարածքում կատարվել է օբյեկտիվ հետազոտության առումով ոչ լիարժեք: Այս տեսանկյունից նկատելի են երկու իրարամերժ մոտեցումներ: Մի կողմից այդ ժամանակաշրջանն ուսումնասիրվել է ջատագովական մոտեցմամբ, մյուս կողմից՝ խորհրդային տոտալ մերժման պայմաններում¹: Ուստի պետք նկատել, որ խորհրդային շրջանի տարբեր իրողություններն ուսումնասիրելիս տեսադաշտից չպետք է դուրս թողնել նախախորհրդային շրջանը: Թեպետ հատկապես ԽՍՀՄ կազմավորման առաջին տարիներին տիրապետող էր հնի վերաբերյալ նիհիլիստական վերաբերմունք, սակայն շատ դեպքերում բացարձակորեն մերժել նախախորհրդային շրջանի ժամանակությունն ու փորձը անկարելի էր: Այդ խնդիրների շարքում է նաև ազգային հարցը: Այս հոդվածում փորձելու ենք շոշափել բոլշևիկյան կուսակցության մոտեցումները ազգային հարցին նախախորհրդային շրջանում:

19-րդ դ. վերջը և 20-րդ դարասկզբը Ռուսական կայսրությունում նշանավորվեց կարևոր իրադարձություններով, հասարակական-քաղաքական կյանքում տարակերպ վայրիվերումներով: Կայսրությունում արդեն գործում էին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, որոնց մեջ էր նաև բոլշևիկյան կուսակցությունը: Այդ փուլում կատարվում էին ազգային հարցի քննարկումներ քաղաքական հարթություններում և ընդունվում որոշումներ Ռուսական կայսրության ոչ ռուսական ազգությունների (հետայսու շարադրանքի ընթացքում այս կերպ նկատի են առնվելու Ռուսական կայսրության և Խորհրդային Միության կազմի մեջ ընդգրկված բոլոր էթնիկ հանրույթները՝ բացառությամբ ռուսների-Ա.Խ.) սոցիալական, տնտեսական և մշակութային խնդիրների վերաբերյալ: Մի շարք ոչ ռուսական էթնիկ հանրույթներ կազմավորեցին իրենց սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները: Լիտվացիներն հիմնադրել էին Լիտվական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (1895), հրեաները՝ Ռուսաստանի և Լեհաստանի Համընդհանուր հրեական աշխատավորների միությունը (հրեական Բունդ, 1897), ուկրաինացիները՝ Հեղափոխական ուկրաինական կուսակցությունը (1900)²: Հատկանշական է, որ Ռուսական Սոցիալ-դեմոկրատական աշխատավորական կուսակցությունը (ՌՍԴԲԿ), որը հետագայում վերանվանվեց ԽՍԿԿ, ձգտում էր իր վերահսկողությունը հաստատել վերոնշյալ ոչ-ռուսական կուսակցությունների նկատմամբ: Դա ենթադրում էր նաև միավորում հենց այդ ուժի ենթակայության ներքո, ինչը

* Հոդվածը ներկայացվել է 28.11.2020 թ., հրատարակության երաշխավորվել՝ ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Մխիթար Գաբրիելյանի կողմից (10.12.2020 թ.), ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Տե՛ս Գաբրիելյան Մ., Խաչատրյան Ա., «Խորհրդային ժամանակության» ուսումնասիրության ազգաբանական առումները, Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ-3, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Ե., 2007, էջ 231:

² Տե՛ս Forgas S. P., Nationality question in the resolutions of the communist party of the Soviet Union 1898-1964, Nationalities Papers: The journal of Nationalism and Ethnicity, Volume 5, Issue 2, 1977, p. 183.

սակայն մերժվեց ոչ ռուսական էթնիկ հանրույթների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կողմից, և տիպական օրինակներից մեկը դա հրեական Բունդի՝ ՌՍԴԲԿ-ից դուրս գալու քայլն էր, իսկ հիմնական պատճառը դա ՌՍԴԲԿ համագումարի պահանջն էր առ այն, որ Բունդը պետք է հրաժարվի որպես ռուսաստանյան հրեա աշխատավորներին ներկայացնող ինքնավար կառույց ՌՍԴԲԿ կազմում հանդես գալուց և տարրալուծվի վերջինիս մեջ¹: Դա բնական էր, քանի որ այդ շրջանում որոշ մասը զգուշանում էր ինքնակա որոշում ընդունելու իրավունքից զրկվել, մյուս մասն էլ, մինչև նման քայլի գնալը, ցանկանում էր գիտենալ՝ կպահպանվի արդյոք իրենց էթնոսի ինքնավարության տվյալ աստիճանը սոցիալիզմի հաղթանակից հետո, թե այն ենթադրում էր նաև նման փոփոխություններ: Միավորում, այնուամենայնիվ, մասամբ տեղի ունեցավ: Կուսակցության երկրորդ համագումարում՝ 1903 թ., Լոնդոնում ՌՍԴԿ-ը ձևակերպեց ռուսական կայսրության ազգային փոքրամասնությունների իրավունքների ընդարձակ ծրագիրը: Ռուսական Կայսրությունում այդ վարդապետության առանձնակի ակտիվության շրջանը մեկնարկում է 1905 թ., որը կապված էր հեղափոխական գործընթացների հետ: Հեղափոխությունը և նրա հետևանքները ակտիվացրեցին Արևելյան Եվրոպայի պրովինցիաների ոչ ռուս բնակչության ազգային զգացումները: Զարոգչական հողվածները տեղական թերթերում և գործարանային թռուցիկները օգտագործում էին ազգային զգացումներն ի օժանդակություն արմատական, քաղաքական և տնտեսական ազգային իրավունքների²: Այս իրադարձությունները, ի հավելումն նաև Արևելյան Եվրոպայում ազգայնական լարվածության ընդհանուր աճը, հարկադրեցին կուսակցությանը ճշգրտել ազգային քաղաքականությանը առնչվող հարցերը³: Հատկապես կարևոր էր ազգերի ինքնորոշման իրավունքի իրացմանը վերաբերող հարցերի քննարկումները և դիրքորոշումները: Ազգային ինքնորոշման խնդրի քննարկումներում հետաքրքրականը Վ. Լենինի հաստատականությունն էր «ինքնորոշում» եզրի քաղաքական իմաստի ընկալման առումով: Այդ խնդիրը դյուրին չէր վճռել զուտ տեսության մակարդակում, ուստի և անհրաժեշտ էր մշտապես համադրել ազգերի ինքնորոշման իրավունքի իրացումը պրոլետարական շարժման շահերի հետ⁴: Սա պատահական չէր. Լենինը և բոլշևիկները չէին կարող շրջանցել ազգային հարցը, քանզի այնպիսի բազմազգ կայսրությունում, ինչպիսին Ռուսականն էր, այն ուներ կենսական նշանակություն և դերակատարություն՝ պետական ներքին կայունության և անվտանգության առումով: Եվ 1903 թ. ՌՍԴԿ Լոնդոնի կոնֆերանսում Լենինը պնդեց ազգային հարցի և ազգերի ինքնորոշման իր տեսլականը, այն է՝ բոլոր քաղաքացիների իրավահավասարություն անկախ ազգությունից, բոլոր ազգերի ինքնորոշման իրավունք, բոլոր ազգերի աշխատավորների միավորում միասնական դասակարգային կազմակերպություններում⁵: Ավելին, Վ. Լենինը, խոսելով ազգերի ինքնորոշման իրավունքի մասին, նշում էր. «Ինքնուրույն և անկախ ազգային պետություն ստեղծելը Ռուսաստանում դեռևս մնում մեծառուսական ազգի արտոնությունը: Մենք՝ մեծառուսական պրոլետարներս, չենք պաշտպանում ոչ մի արտոնություն, չենք պաշտպանում այս արտոնությունը ևս: Մենք պայքարում ենք տվյալ պետության հողի վրա, միավորում ենք տվյալ պետության բոլոր ազգերի աշխատավորներին, մենք չենք կարող տեր կանգնել ազգային զարգացման այս կամ այն ուղուն, մենք բոլոր հնարավոր ուղիների միջոցով գնում ենք դեպի

¹ *Տե՛ս Бунд. Документы и материалы. 1894-1921., М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2010, с. 370-371.*

² *Տե՛ս Forgas S. P., Estonian Nationalism and Primary Education 1860-1905 (Ph.D. dissertation, University of Illinois, 1974), pp. 271, 281.*

³ *Տե՛ս Riasanovsky N. V., A History of Russia. 2d ed., New York: Oxford University Press, 1969, p. 452.*

⁴ *Տե՛ս Беледи Л., Краус Т., Сталин, М., Издательство политической литературы, 1990, с. 41.*

⁵ *Տե՛ս История Коммунистической партии Советского Союза, Б.Н. Пономарев, М.С. Волин, В.С. Зайцев и др., 6-е изд., доп., М.: Политиздат, 1982, с. 53.*

մեր դասակարգային նպատակները»¹: Յետագայում, ելնելով իրավիճակային հրամայականներից, բուլղարները մեկ անգամ չէ, որ գործեցին ի հակառակ իրենց հայտարարած սկզբունքների:

Ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատական շրջանակների քննարկումներում կարևոր էին ապագա պետության կառուցվածքին վերաբերող հարցերը: Ինչու ստեղծել էթնոտարածքային ինքնավարություններ սոցիալիզմի պայմաններում, եթե շատ սոցիալիստներ համաձայն էին, որ ֆեդերալիզմը դա «բաղբենի իդեալ» է, որ «ազգային մշակույթը» բուրժուական ֆիկցիա է, և, որ ասիմիլյացիան պրոգրեսիվ գործընթաց է²: Տեսական մակարդակում որոշակի զիջումները ոչ ռուսական ազգություններին, հնարավոր է թվան լայն և արմատական, սակայն առավել ուշադիր դիտարկումը երևան է հանում դրանց միասնական նպատակները: Դրանք նպատակ ունեին բարձրացնելու կայսրությունում սոցիալ-դեմոկրատների միասնությունը: Վ. Լենինն անձամբ առաջարկում էր, որ պարզ իմացությունը անջատման իրավունքի մասին կբարձրացնի ժողովրդի ձգտումը անկախ պետականության ստեղծման³: Նրա առաջարկը բռնեց իրականության քննությունն ավելի շուտ, քան նա սպասում էր: Ազգերի ինքնորոշման սկզբունքը գերակա էր Առաջին աշխարհամարտի արդյունքում գումարված Փարիզի խաղաղության վեհաժողովում 1918 թ.: ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի հանձնարարությամբ հատուկ այդ կոնֆերանսի համար պատրաստվել էին քարտեզներ, որոնք պարունակում էին տեղեկություններ Եվրոպայի և հարակից շրջանների բնակչության ազգային կազմի և տեղաբաշխման մասին, էթնիկական-լեզվական սահմանների և գոյություն ունեցող պետական սահմանների մասին⁴: Սակայն 1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում կատարվեց բուլղարական հեղաշրջումը: Բուլղարիզմը, սակայն, գործում էր որպես համակայսերական կուսակցություն: Ըստ բուլղարական վարդապետության՝ ազգային հարցը պետք է ծառայեր դասակարգային պայքարին և նրա նպատակներին, իսկ այդ պայքարի հաղթական արդյունքն էլ արդեն պետք է վճռեր ազգային հարցը⁵: Ըստ այդմ էլ ազգային հարցը ստորադասվում էր դասակարգային շահին և դառնում երկրորդական:

Ինքնակալության տապալումը հանգեցրեց նախկին Ռուսական կայսրության ազգային շրջաններում արդեն իսկ գոյություն ունեցող քաղաքական կազմակերպությունների գործունեության ակտիվացմանը և նորերի առաջացմանը: Առանձնապես դա սուր զգացվեց հատկապես մուսուլմանական միջավայրում: Կայսրության բոլոր մուսուլմանական շրջաններում ակտիվորեն սկսեցին ստեղծվել տարբեր իսլամական կուսակցություններ, կոմիտեներ, խորհուրդներ: Որոշ տեղերում դրանց գլուխ կանգնեցին մոլլաներ, որոշներում հասարակական գործիչներ և զինվորականներ⁶: Այստեղ հարկ է նկատի առնել մի նրբություն, որ արդեն մուսուլմանական շրջաններում զգացվում էր քաղաքական ակտիվության աճին համընթաց նաև ազգայնականության սկզբնավորում և ինքնության գիտակցում թեկուզ որոշակի կրոնական երանգավորմամբ:

Ինքնակալության տապալման հետևանքով Անդրկովկասում ևս սկիզբ առան ազգային շարժումներ: Բնականաբար, կայսրության, այն է՝ կայուն սոցիալ-քաղաքական կառույցի փլուզումը, առաջացրեց վակուում լայնատարած կայսրության ողջ տարածքով մեկ:

¹ Ленин В., Полное собрание сочинений, том 25, М., 1973, с. 276-277.

² St' u Slezkine Y., Ethnoterritorial Units in the USSR and Successor States, Identities in transition: Eastern Europe and Russia after the collapse of communism, Victoria E. Bonnell, editor, Center for Slavic and east european studies, Research Series, Number 93, University of California at Berkeley, 1996, p. 93.

³ St' u Zelev A., The Nationalities Question: How It Was Solved in the USSR, Moscow: Novosti Press Agency Publishing House, 1972, p. 13.

⁴ St' u Գևորգյան Յ., Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ, Եր., 2005, էջ 355.

⁵ St' u Силницкий Ф., Национальная политика КПСС (1917-1922 гг.), Третье издание, Проблемы Восточной Европы, Вашингтон, 1990, с. 36.

⁶ St' u Силантьев Р., Мусульманская дипломатия в России: История и современность, учебное пособие, Москва, 2009, с. 93.

Նման իրավիճակում նախկին կայսրության կազմում առկա էթնոսների վերնախավի, քաղաքական ընտրանու համար կարևոր նշանակություն ուներ սեփական քաղաքական, սոցիալական ու մշակութային ինքնակազմակերպման խնդիրը: Մասնավորապես, կովկասյան թաթարների մոտ արդեն քսաներորդ դարասկզբին ծիլեր էր տվել թյուրքիզմի գաղափարաբանությունը մտավորական վերնախավի շրջանակում՝ մամուլում հրապարակվող հոդվածների միջոցով: Թյուրքիզմի Կազանյան դպրոցի ներկայացուցիչներ Ի. Գասպրինսկու և Յ. Աբչուրայի գաղափարների համակիրն այստեղ Յուսեյնզադե Ալի բեյն էր, ով «Յայաթ» (Կյանք) և «Ֆույուզաթ» (Արգասաբերություն) թերթերում զարգացնում էր թյուրքիզմի, իսլամիզմի և եվրոպականության սկզբունքները՝ դրանք դիտելով կարևոր նախապայման հասարակության գոյատևման և առաջընթացի համար¹: Մարդաբանական դիտանկյունից նրա այս սկզբունքների կարևորությունը նրանում էր, որ դարերով շիականության միջոցով հասարակության իրանականացման, այնուհետև ռուսականացման դեմ առաջ էր քաշում թյուրքիզմի գաղափարաբանությունը լեզվի, գրականության, մշակույթի ոլորտներում: Թյուրքիզմի գաղափարաբանությունը քաղաքական հարթությունում հանգում էր Օսմանյան կայսրության՝ իբրև բնական դաշնակից տեսնելուն՝ այն համարելով ողջ թյուրքական աշխարհի հենարանի: Ազգային վերնախավի կողմից հասարակության նմանակերպ ուղղորդման արդյունքները դրսևորվեցին 1917 թ. ռուսական հեղափոխությունների հետևանքով կայսրության անկումից հետո: Թերևս Անդրկովկասում ազգային անկախ պետականության գաղափարը Փետրվարյան հեղափոխությունից հետո միանգամից առաջ չբաշվեց անդրկովկասյան քաղաքական վերնախավի կողմից: Օպտիմալ տարբերակ էր համարվում միասնական Ռուսաստանի կազմում ազգային լայն ինքնավարության պահանջը²: Համեմատաբար ազատ գործունեության հնարավորություն ստացան վրացական և հայկական քաղաքական ուժերը, իսկ ահա 1918 թ. Բաքվում բացվեց կովկասյան մուսուլմանների 1-ին համագումարը: Բուլչևիկների համար անհրաժեշտ էր ստեղծված իրադրությունում արագ վերակողմնորոշվել և նոր մարտավարություն մշակել ազգային հարցում: Մասնավորապես կարևորագույն հարցերից մեկը հանդիսանում էր ազգերի ինքնորոշման իրավունքը: Ինքնակալության անկումը ինքնաբերաբար առաջին պլան էր մղել այդ խնդիրը, և որևէ քաղաքական կազմակերպություն, որն ուներ հեռահար նպատակներ, չէր կարող պարզապես հաշվի չառնել ազգերի ինքնորոշման իրավունքը և վերաբերմունք չդրսևորել այդ հարցում: Անչափ հետաքրքրական է բուլչևիզմի դիրքորոշումն այս հարցում. ինչպես շատ հարցերում, ազգային քաղաքականության և ազգերի ինքնորոշման իրավունքի հարցում բուլչևիկների դիրքորոշումը երկդիմի էր և ըստ իրադրության՝ փոփոխական:

Իրենց ծրագրային դրույթներում բուլչևիկներն կուսակցությունը դիտարկում էին համակայսերական սկզբունքով, որպես համակայսերական կուսակցություն, ինչպես նաև առաջ էին քաշում այն դրույթը, թե միայն կուսակցական կենտրոնը պետք է կանոնակարգի բոլոր ազգերի քաղաքականությունը կայսրության ներսում: Իրականում բուլչևիկները դեմ էին լայն ազգային իրավունքներին, քանի որ այն սահմանափակում էր պետական կենտրոնացվածությունը (պետական ցենտրալիզմ), իսկ հետագայում ստեղծվելիք նեոկայսրության՝ հորհրդային պետության, համար նման խնդիրներն անխուսափելի կլինեին՝ հաշվի առնելով պետության էթնիկ խճանկարը և էթնիկ բովանդակությունը: Արդեն 1929 թ. Ի. Ստալինը ձևակերպում է «ազգ» հասկացության սեփական տեսլականը ըստ որի՝ «ազգը դա պատմականորեն ձևավորված մարդկանց ընդհանրույթ է, որը ծագում է լեզվի, տարածքի, տնտեսական կյանքի և հոգեկան կերտվածքի ընդհանրության հիմքի վրա՝ ցուցաբերելով

¹ *Տէ'ս Թուխամետդինով Ք., Зарождение и эволюция тюркизма (Из истории политической мысли и идеологии тюркских народов; Османская и Российская империи, Турция, СССР, СНГ. 70-е гг. XIX в.-90-е гг. XX в.), Казань, Изд-во "Заман", 1996, с. 86.*

² *Տէ'ս Մելիքյան Վ., Իշխանության ազգայնացման հիմնահարցը Անդրկովկասում (1917թ. նոյեմբեր), «Պատմաբանասիրական հանդես», 2010, № 1, էջ 80:*

մշակույթի ընդհանրություն: Այդուհանդերձ, ինքնին հասկանալի է, որ ազգը, ինչպես և յուրաքանչյուր պատմական երևույթ, ենթակա է փոփոխման օրենքին, ունի սեփական պատմությունը, սկիզբն ու վախճանը»¹: Ըստ բոլշևիկների եթե մարդկանց որևէ հանրույթ չէր համապատասխանում վերոնշյալ ձևակերպմանը, ապա դադարում էր ազգ լինելուց²: Ի. Ստալինի այս ձևակերպումը մտրակի դեր էր ստանձնում բոլշևիկների ձեռքում, բավական էր որևէ էթնիկ հանրության զրկել ստալինյան ձևակերպման բաղադրիչներից մեկից, որպեսզի այն դադարեր որպես ազգ ընկալվելուց, իսկ դա արդեն պարունակում էր լուրջ ենթատեքստ տվյալ էթնոսի համար՝ կապված վերջինիս ապագայի տեսլականի հետ Խորհրդային կայսերական համակարգում: Բոլշևիկյան քաղաքականությունը ազգային հարցում հասկանալու համար անչափ կարևոր է իմանալ, որ ազգային հարցի վերաբերյալ Լենինն ունի ևս մեկ թեզիս, որը հանդիսանում է բոլշևիզմի ազգային քաղաքականության առանցքներից մեկը: Ըստ այդ թեզիսի՝ բոլշևիկները հոգում են ոչ թե ժողովուրդների և ազգերի ինքնորոշման մասին, այլ պրոլետարիատի, յուրաքանչյուր ազգային պահանջ գնահատելով դասակարգային պայթյալի տեսանկյունից³: Յետաքրքրական է այն փաստը, որ քաղաքականության մեջ մտնելու հենց սկզբից Վ. Լենինի կարգախոսը հանդիսացան ո՛չ ժողովուրդը, ո՛չ ազգը, այլ դասակարգը և կուսակցությունը: Այստեղ նկատենք, որ սեմանտիկ ընկալման դեպքում անհամապատասխանություն է առկա ազգերի ինքնորոշման բոլշևիկյան ընկալման մեջ բովանդակային և նոմինալ առումներով, այսինքն՝ ողջ էթնիկ հանրությունից բոլշևիկները զատորոշում էին սոցիալ-մասնագիտական մեկ խմբի և դրա շահերը գերակա հայտարարում էթնիկ հանրույթի մնացյալ մասի վրա: Եվ այս համատեքստից էլ դիտարկելով՝ բոլշևիկյան կարգախոսները և արտաքին գաղափարաբանական հիմնադրույթները ազգերի բարօրության վերաբերյալ, լիովին հիմնազուրկ են դառնում:

Ազգային հարցում բոլշևիզմի քաղաքականության երկդիմիությունն արտահայտվեց նաև այն բանում, որ հանուն պետության ամբողջականության պահպանման՝ բոլշևիկները փարվեցին մեծառուսական պետական ազգայնականության գաղափարին, թեև շղարշում էին այն ինտերնացիոնալիստական հռետորաբանությամբ⁴:

Ազգային հարցը բոլշևիկյան դիտանկյունից տեսարկվում էր որպես կապիտալիզմի և դեմոկրատիայի ժամանակաշրջանի խնդիր, իսկ քանի որ ըստ մարքսիզմի գաղափարաբանության՝ կապիտալիզմը որպես հասարակական-տնտեսական ֆորմացիա զուտ անցումային փուլ է հանդիսանում հասարակական համակեցության բարձրագույն ձևին՝ սոցիալիզմին հասնելու ճանապարհին, ապա միանգամայն պարզ է դառնում բոլշևիկյան այն ենթադրությունը, որ սոցիալիզմի օրոք ազգային հարցը կվերածվի սոսկ մնացուկի և կլուծվի ի թիվս այլ հարցերի: Եվ ամենահետաքրքրական այն է, որ ազգի իրավունքը ազգային ինքնորոշման վերաբերյալ բոլշևիզմում հասկացվում է որպես մարզային ինքնավարության իրավունքի ձեռքբերում մեկ միասնական պետության կազմում⁵, այսինքն՝ ազգերի ազատ ինքնորոշումը, ընդհուպ մինչև լիակատար անկախության, բացառվում էր բոլշևիկների կողմից, մինչդեռ այդ առումով հատկանշական է հիշել 1917թ. դեկտեմբերին բոլշևիկների հրապարակած «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, ըստ որի՝ Խորհրդային Ռուսաստանը պաշտպանում էր առաջին աշխարհամարտի ժամանակ Ռուսաստանի կողմից նվաճված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն և շեշտում, որ դա հնարավոր է մի շարք նախնական երաշխիքների

¹ Сталин И., *Марксизм и национально-колониальный вопрос, Сборник избранных статей и речей*, Партиздат ЦК ВКП(б), М., 1937, с. 7.

² Տէ՛ս Տիլնիցկի Փ., *Եզվ. աշխ.*, էջ 40:

³ Տէ՛ս Լենին Վ., *Полное собрание сочинений, том 25*, с. 274-275.

⁴ Տէ՛ս Բորձյուգով Գ., Բухараев Վ., *Национальная историческая мысль в условиях советского времени, Национальные истории в советском и постсоветских государствах, под ред. К. Аймермахера, Г. Бордюгова, М., «АИРО-XX», 1999, с. 23.*

⁵ Տէ՛ս Տիլնիցկի Փ., *Եզվ. աշխ.*, էջ 34:

դեպքում, որոնք էին՝ ա. Ռուսական զորքերի դուրսբերումը «Թուրքահայաստանից» և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը՝ բնակիչների անձնային և գույքային անվատնագությունը ապահովելու նպատակով, բ. Տարբեր երկրներում ցրված հայ գաղթականության, վտարանդի հայերի, ինչպես նաև պատերազմի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստան», գ. Վերջինիս ժամանակավոր ժողովրդական կառավարչության ստեղծումը՝ հայ ժողովրդի՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված պատգամավորների խորհրդի ձևով, դ. «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները պետք է որոշեին հայ ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչները՝ խառը և վիճելի (մահմեդական և այլն) օկրուգների ընտրյալ ներկայացուցիչների համաձայնությամբ¹: Այս դեպքում ևս բուլճարիկները առաջնորդվում էին փոքր ժողովուրդների շահերը հօգուտ իրենց նպատակների ծառայեցնելու սկզբունքով, և այդ իմաստով չէին խորշում օգտվել քաղաքական ամենատարբեր տեխնոլոգիաների օգտագործումից: Ըստ իս, «Թուրքահայաստանի մասին» դեկրետը զուտ քաղաքական նկատառումներից կատարված քայլ էր, մարտավարական քայլ, և միամտություն կլինի կարծել, թե բուլճարիկները պատրաստակամ էին այն իրագործել, դեռ ավելին, արևմտահայության շահերը դարձավ առքուվաճառքի առարկա 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսում, որի ավարտին կնքված պայմանագրով երկու՝ միջազգայնորեն չճանաչված (խորհրդային Ռուսաստան և Զեմլայական Թուրքիա) պետությունների կառավարությունները վճռում են երրորդ պետության՝ Չայաստանի, սահմանային-տարածքային հարցերը՝ առանց վերջինիս ներկայացուցիչների գիտության և մասնակցության²: Այս օրինակը ի ցույց է դնում բուլճարիկների՝ ազգային հարցում վարած քաղաքականության իրական ելությունը: Եվ կամ էլ կարելի է ենթադրել, որ արևմտահայության ազատ ինքնորոշման հարցում բուլճարիկները, եթե իրոք շահագրգռված էին, ապա կարելի է բացատրել դա այն հանգամանքով, որ Արևմտյան Չայաստանը գտնվում էր ոչ թե Ռուսական կայսրության, այլ Օսմանյան կայսրության կազմում, և ուղղակի ժամանակի խնդիր էր ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառմամբ Արևմտահայաստանի միացնելը Ռուսաստանին և, այնուհետև, նրա հանդեպ կիրառել ազգերի ինքնորոշման բուլճարիկյան տարբերակը, այն է՝ ինքնորոշում միայն պետության սահմաններում (կայսրության): Որ ազգային ինքնորոշման իրավունքը բազմաթիվ անգամ շահարկվում էր բուլճարիկների քաղաքականության դարձդարձումներում, բավական ընդգծված կերպով երևում է Ի. Ստալինի գործունեությունում: Հեղափոխությունից հետո նա հանդես էր գալիս «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայի» սկզբունքների ոգով՝ հայտարարելով ազգային ինքնորոշման իրավունքը: Հանդես գալով Աշխատավորների, զինվորների և գյուղացիների խորհուրդների համառուսաստանյան 3-րդ համագումարում 1918 թ. հունվարին՝ Ի. Ստալինը նշում էր. «Ինքնորոշման սկզբունքը պետք է դառնա միջոց սոցիալիզմի համար պայքարում և պետք է ենթակայվի վերջինիս սկզբունքներին»³: Այսինքն՝ ժողովուրդներ ազատ ազգային ինքնորոշման իրավունքը ստորակայվում էր դասակարգային նեղ շահի նպատակահարմարությանը, բուլճարիկների քաղաքականության շահի տրամաբանությանը, և, ըստ իս, հանդիսանում էր բուլճարիկյան կայսերականության գործնական դրսևորումներից մեկը, որը, իհարկե տարբեր ձևակերպումներով, շարունակական էր լինելու խորհրդային Միության գոյության ողջ շրջանում: Իհարկե, մինչև Վ. Լենինի մահը Ի. Ստալինը հնարավորություն չունեի ազատ ծավալելու իր գործունեությունը և կյանքի կոչել ազգային քաղաքականության սեփական տեսական հայեցակարգերը: Վ. Լենինն էլ, Ի. Ստալինի նման, մինչև հեղափոխությունն ազգային ինքնորոշման հարցում ուներ այլ դիրքորոշում: Նա իր «Ազգային հարցի

¹ *Տէ՛ս Դեկրետի Սօվետսկոյ վլաստի, տ. 1, 25 օկտյաբր 1917 շ. – 16 մարտ 1918 շ., Մ., Գոս. Իզդատ-Վո Բոլիտիչեսկոյ Լիտերատուրի, 1957, շ. 298-299.*

² *Տէ՛ս Հակոբյան Ա., Խորհրդային Չայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, էջ 197:*

³ *Տէ՛ս Բեկեդի Լ., Կրայս Կ., Նշվ. աշխ., էջ 83:*

մասին» թեզիսներում («Тезисы по национальному вопросу», 1913) պնդում էր, որ «սոցիալ-դեմոկրատները տեսնում են «հարցի լուծումը՝ հիմնված բացառապես տվյալ տարածքի բնակչության համընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի քվեարկության վրա»¹: 1917 թ. հոկտեմբերի 1-ին Վ. Լենինը խոստացավ, որ պրոլետարական պետական իշխանությանը կհաջորդի «անհապաղ լիակատար ազատության վերականգնումը Ֆինլանդիայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, բոլոր մահմեդականների համար»², իսկ մեկ շաբաթ անց՝ հոկտեմբերի 8-ին, կրկնեց իր խոստումը. «Վերցնելով իշխանությունը՝ մենք նույն պահին այդ իրավունքը գործածելի կադարձենք և Ֆինլանդիայի և Ուկրաինայի և Հայաստանի և ցարիզմի կողմից ցանկացած հալածյալի համար»³: Սակայն շարունակելով Վ. Լենինը առաջ է բերում հակաթեզ. «Սակայն մենք մեր կողմից անջատում ամենևին չենք ցանկանում: Մենք ուզում ենք ինչքան հնարավոր է մեծ պետություն, ինչքան հնարավոր է՝ սերտ կապեր, ինչքան հնարավոր է՝ վելիկոռուսների հետ հարևանությամբ ապրող մեծաքանակ ազգեր: Մենք դա ցանկանում ենք ժողովրդավարության և սոցիալիզմի շահերից ելնելով», և, վերջապես, թեզը և հակաթեզն ավարտվում են յուրօրինակ սինթեզով. «Մենք ցանկանում են ազատ միացում, ուստի և պարտավոր ենք ճանաչել անջատման ազատությունը (առանց անջատման ազատության ճանաչման՝ միացումը չի կարող ազատ համարվել)»⁴: Բոլշևիկների նման քաղաքական խաղի շարժառիթը պետք է փնտրել պատմաքաղաքական իրադրության ինքնատիպության հետևախորթում, քանի որ այդ ժամանակ ընթանում էր քաղաքացիական պատերազմը, և բոլշևիկները խնդիր ունեին իրենց համար ապահովել նախկին Ռուսական կայսրության էթնիկ հանրությունների աջակցությունը, ուստի և ազգային հարցում վարում էին նմանօրինակ քաղաքականություն. ինչևէ, դա ժամանակավոր տեղատվություն էր, ինչին հաջորդելու էր տրամագծորեն հակառակ քաղաքականություն:

Ազգերն իրողություն էին, բոլոր իրապես գոյություն ունեցող ազգերն ինքնիշխան էին, և բոլոր ինքնիշխան ազգերն ունեին քաղաքական ինքնորոշման իրավունք «իրենց սեփական» տարածքների վրա: Առանց տարածքների ազգերն իրողություն չէին. բոլոր տարածքային սահմանները բաժանվեցին արհեստականի և բնականի («ըստ բնակչության «համակրանքի»»): իսկ բնակչության համակրանքի բնական արգասիքով, ըստ Վ. Լենինի՝ «հնարավոր էր բնակչության ազգային կազմի առավել միասնություն»⁵:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բոլշևիզմը հստակորեն վարում էր ոչ սկզբունքային ազգային քաղաքականություն: Այն մանիպուլյացիայի էր դիմում գաղափարաբանական իր հիմնաքարի՝ մարքսիզմի նկատմամբ: Ըստ էության՝ այն քողարկող ծածկոց էր: Հենց Ի. Ստալինը վերջակետ դրեց դասական մարքսիզմի ընկալմանը և դրան համապատասխան քայլերին՝ վերանայման ենթարկելով մարքսիզմի իմաստն ինքնին⁶: Մինչև 1917 թ. ռուսաստանյան սոցիալ դեմոկրատների, այդ թվում՝ բոլշևիկների մոտ ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը՝ ընդհուպ մինչև անկախ պետության ստեղծումը, ճանաչվում էր: Իրադրության փոփոխությունը և իշխանության գլուխ անցնելը վերախմբագրեցին բոլշևիկների մոտեցումները, որոնք գործնականում հրաժարվեցին ազգերի ինքնորոշման իրավունքի պաշտպանությունից՝ ձեռնամուխ լինելով նախկին Ռուսական կայսրության մեջ մտնող ազգային շրջանները նոր տիպի պետության շրջանակներում համահավաքելու գործընթացին, ինչը հակասում էր անկախ պետություն ստեղծելու՝ ազգերի ինքնորոշման իրավունքի հիմ-

¹ Ленин В., Полное собрание сочинений, том 23, М., 1973, с. 315.

² ՏԵ՝Ս նույն տեղում, հ. 34, Ս., 1969, էջ 299:

³ ՏԵ՝Ս Свобода В., Союз добровольный республик свободных (Из истории создания СССР), Этнографическое обозрение, 1992, № 2, с. 3.

⁴ ՏԵ՝Ս Ленин В., Աշվ. աշխ., հ. 34, էջ 379:

⁵ ՏԵ՝Ս Ленин В., Вопросы национальной политики и пролетарского интернационализма, М., 1965, с. 32-33.

⁶ ՏԵ՝Ս Даниелс Р., Взлет и падение коммунизма в России, пер. с английского И. Кожановской, М., Российская политическая энциклопедия: Фонд «Президентский центр Б.Н. Ельцина», 2011, с. 307.

Նարար սկզբունքին: Ելնելով իրադրության հրամայականից՝ հանուն իր շահերի և Նպատակների իրագործման՝ բռնազորով ոտնահարում էր ցանկացած էթնիկ հանրության ազգային իրավունքներն ու շահերը՝ չխորշելով որևէ միջոցից, շեշտադրում էթնիկությունը՝ միայն Նպատակահարմարությունից ելնելով, իսկ հանրագումարի բերելով ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ վիստյան և բռնազորյան ընկալումները՝ պետք է ասել, որ էթն մարդաբանական ընկալմամբ՝ առաջին մոտեցումը կարելի է անվանել անհատակենտրոն, ապա երկրորդի մասին խոսելիս գործ ունենք խմբակենտրոն մոտեցման հետ, երբ հանուն խմբի, կլանի կամ որևէ սոցիալ-մասնագիտական խմբի շահերի համար անտեսվում, երբեմն էլ ոտնահարվում էին ինչպես ամբողջ ազգերի, այնպես էլ անհատների հիմնարար իրավունքներն ու ազատություններ:

Артак Хачатрян, НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.). В статье рассматриваются подходы большевистской партии к национальному вопросу и вопросам национальной политики до 1917 года. В антропологическом понимании, говоря о национальном вопросе и восприятии большевиков о самоопределении наций, можно отметить, что мы имеем дело с группоцентричным подходом, когда во имя интересов группы, клана или какой-либо социально-профессиональной группы игнорируются, иногда нарушаются основные права и свободы как всего народа, так и отдельных лиц. Нужно заметить, что подобная политика была свойственна не только дореволюционным большевистским понятиям. И после победы в гражданской войне и закрепления советской власти большевики придерживались этой политики на протяжении всего времени у власти. И в ряде конфликтов на постсоветском пространстве на последнем этапе распада Советского Союза не меньшую роль сыграли взгляды большевиков в национальном вопросе и проводимая политика.

Ключевые слова: национальная политика, Российская империя, право наций на самоопределение. В. Ленин, большевики, РСДРП (Российская социал-демократическая рабочая партия), И. Сталин.

Artak Khachatryan, NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917). The article discusses the approaches of the Bolshevik Party to the national issue and issues of the national policy before 1917. In the anthropological sense, speaking about the national question and the bolsheviks' perception of self-determination of nations, we can note that we are dealing with a group-centric approach, when, for the sake of a group, clan, or social-professional group, the basic rights and freedoms of both the entire people and individuals are sometimes ignored or violated. It should be noted that such kind of policy was characteristic of not only the pre-revolutionary Bolshevik concepts. And after the victory in the civil war and the consolidation of Soviet power, the Bolsheviks adhered to this policy throughout their time in power. And in some of the conflicts in the post-Soviet space at the last stage of the collapse of the Soviet Union, the views of the Bolsheviks on the national question and the policy played an equally important role.

Key words: national policy, Russian Empire, the right of nations to self-determination, V. Lenin, Bolsheviks, RSDWP (Russian Social-Democratic Workers' Party), I. Stalin.